Գ.

ԴԱՒԻԹ

Մհեր դարձաւ, գնաց ուր տուն։

Կսկըծուրաւ. կսկուծ տուեց ուր սիրտ ու Էնդեղ մեռաւ[1]։

Սասունցիք Քեռի-Թորոսկին բերեցին դրեցին ուրանց մեծ։

Եօթ տարի սուգ կապեցին Մհերի յետև։

Քեռի-Թորոսկին լէ Էղաւ երկու տղայ, մէկի անուն Խոր-Մանուկ, մէկի անուն Զինով-Օվան։

Սասունայ իշխաններ ու տէրտէր քոման ու Էկան Քեռի-Թորոսկի կուշտ. Էկան սեղան պատրաստին ու նստան։

Բերեցին գինի դրեցին, տէրտերրոջ ըսեցին.—Տէ՛րտէր, Մհերին մէկ «հոգոց» ըսէ։

Հոգոցն օր ըսեց պրծաւ ու գինին սկսեցին ընալ ու տուեցին Քեռի-Թորոսկին՝—Դէ՛ խմէ։

Ու Քեռի-Թորոսիկ առաւ սաքան ձեռ ու միտք էրեց՝ Իմ Է-

---

[1]) Ա. վարիանտով Մհեր մեռնելուց առաջ «Տարաւ ուր ձեռնով թուր զարկեց կպրէ կարսի մէջ թէ՝—Իմ գեանդի բաղանի տղէք կ'էղնին, ուրանց պէտք կ'իգայ։ Դեստեր լէ դրին սնդկի մէջ, ու մեռաւ»։

Բ. վարիանտի մէջ Մհերի մահուան մասին այլ տեսակ է պատմուում. Մհեր երկու որդի ունէր՝ Մսրամելիք՝ կռապաշտ և Դաւիթ խաչապաշտ կնոջից. մահուան բոպէին Մհեր ամեն ինչ կտակում է Մսրամելիքին կռապաշտ կնոջ ազդեցութեամբ։ Դաւթի մայրը, իմանալով այդ բանը, վազում է մեռնող ամուսնու մօտ և աղաչում է իւր որդուն էլ մի բան տալ.

«Քուռկիկ-Ջալալին
Խաչ պատարագին,
Թուրն ի կէծակին,
Խուդէն անդաբին
Զանրիկ գուրզին,
Էն էլ փէշքէշ պարոն Դաւթին»—ասում է
Մհեր և աւանդում հոգին։